# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 75-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ ԱՊՐԻԼԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, 17-րդ հոդվածով՝

***Որոշում եմ.***

2022 թվականի ապրիլի 20-ին, ժամը՝ 15:00-ին, ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարանում գումարել ավագանու արտահերթ թիվ 5 նիստը՝ հետևյալ օրակարգով՝

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 20-ի արտահերթ թիվ 5 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2.ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին,

3. Հողի հարկի տույժից ազատելու մասին,

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու, աճուրդի մեկնարկային գին, մասնակցության վճար և աճուրդի քայլի չափը սահմանելու մասին,

5. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ընտանիքներին զավակի ծնվելուց միանվագ գումար հատկացնելու մասին,

6. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում հարազատին կորցրած յուրաքանչյուր ընտանիքին միանվագ գումար հատկացնելու մասին,

7. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին,

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա. ԹԱՄԱՋՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 76-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.05թ.թիվ 2387-Ն որոշմամբ

Որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի կադաստրային քարտեզի 06-003-032-000012 ծածկագրով, սեփականության իրավունքի գրանցման թիվ 1330888 վկայականով 0.122 հա տնամերձ հողամասին և հողամասում առկա շենք-շինություններին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, Ախթալա քաղաք, Ս.Սպանդարյան փողոց 23 փոստային հասցեն:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 77-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.05թ.թիվ 2387-Ն որոշմամբ

Որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի կադաստրային քարտեզի 06-003-041-000002 ծածկագրով, սեփականության իրավունքի գրանցման թիվ 2261760 վկայականով 0.520 հա տնամերձ հողամասին և հողամասում առկա շենք-շինություններին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, Ախթալա քաղաք, Րաֆֆու փողոց 30 փոստային հասցեն:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 78-Ա

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 15-ի <<ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 74-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի բնակիչ ԱՁ Վարսենիկ Հարությունյանի հայտը,

Որոշում եմ՝

1. Թույլատրել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի բնակիչ ԱՁ Վարսենիկ Հարությունյանին 2022 թ. ապրիլի 1-ից 2022 թ. հունիսի 30-ն ներառյալ ընկած ժամանակահատվածում իրականացնելու ծխախոտի արտադրանքի վաճառք:

2. Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 79-Ա

### ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԾԱԾԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ << Քաղաքացիական օրենսգրքի >> 188-րդ հոդվածով , ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 2-րդ մասով, ՀՀկառավարության 5 հունվարի 2022 թվականի N 13-Ն որոշմամաբ, ՀՀ կառարավության 5 հունվարի 2022 թվականի N 14-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 11/փետրվարի /2021 թվականի թիվ 160-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 04/հունիսի/2020 թվականի թիվ 1023-Ն որոշմամբ, 'Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին' ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6 –րդ կետով և հաշվի առնելով, որ նշված ինքնակամ կառուցած շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում է քաղաքաշինական նորմերը հիմք ընդունելով <<Ռեկոն >> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, շինության բնութագիրը, ինչպես նաև որակավորման վկայական ունեցող անձ հանդիսացող Արթուր Աշոտի Ամիրաղյանի կողմից տրված 2022HNTJ8F չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրով հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Նարեկ Սուրենի Բաղդասարյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Լոռու մարզ Ախթալա համայնք գյուղ Նեղոց Թբիլիսյան խճուղի 63 հասցեի հողամասում չափագրման տվյալների մուտքագրման թիվ 2022HNTJ8F ծածկագրով հաշվառված, 2015 թվականին ինքնակամ կառուցած ծածկը 161.2 քմ արտաքին մակերեսով:
2. Նշված ծածկի օրինականացման համար սահմանել վճար՝ 152575.8 ՀՀ դրամի չափով/վճարումը կատարվում է Ախթալայի համանքապետարանի 900265122268 հաշվեհամարին:

3. Սույն որոշման 2-րդ կետով սանմանված վճարները ինքնակամ կառույցը իրականացրած անձի կողմից 60/վաթսուն/ օրվա ընթացքում չկատարելու դեպքում , որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
5. Նշված շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հիմք՝ Ն.Բաղդասրյանի դիմումը, սեփ. վկայականի պատճեն, <<Ռեկոն >> ՍՊԸ կողմից տրված հատակագծերը, Արթուր Աշոտի Ամիրաղյանի կողմից տրված 2022HNTJ8F չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքը

**Համայնքի ղեկավար՝** **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

22 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 80-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇՏՎԱԾ /ՓՈՓՈԽՎԱԾ/ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի դրույթներով, ի կատարումն ՀՀ կառավարության 2005թվ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման և հիմք ընդունելով Ախթալա համայնքի ավագանու 2009թվ.-ի սեպտեմբերի 30-ի թիվ 65-Ա որոշումը, հիմք ընդունել համայնքի կադաստրային քարտեզը և հաշվի առնելով համայնքի անշարժ գույքերի վերահասցեավորման անհրաժեշտությունը

Որոշում եմ՝

1. ՀՀ մարզ Լոռի, քաղաք Ախթալա, Թումանյան փողոց 7 շենք, թիվ 18 բնակարան հասցեի անշարժ գույքը, վերահասցեավորել՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ախթալա, քաղաք Ախթալա, Հ.Թումանյան փողոց, 3-րդ փակուղի, 7 շենք, թիվ 16 բնակարան հասցեի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝ Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 81-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.05թ.թիվ 2387-Ն որոշմամբ

Որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ախթալա քաղաքի կադաստրային քարտեզի 06-003-017-001-030-000014 ծածկագրով կառուցման և սպասարկման հողամասին և 06-003-017-001-030-000014-001 ծածկագրով անշարժ գույքին՝ ավտոտնակին, տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Ախթալա համայնք, Ախթալա քաղաք, Խ.Աբովյան փողոց, 22/11 փոստային հասցեն:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**